ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 20 – ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 1994-1995 ,1996-1997 ԵՎ 1998-1999 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 11-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով

որոշում եմ՝

1. Հաստատել՝
   1) Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 1994-1995, 1996-1997 և 1998-1999 թվականներին ծնված պատանիների և երիտասարդների բոնցքամարտի մարզային առաջնության կանոնակարգը՝ համաձայն N1 հավելվածի .
   2) Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 1994-1995, 1996-1997 և 1998-1999 թվականներին ծնված պատանիների և երիտասարդների բոնցքամարտի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը ՝ համաձայն N2 հավելվածի.
   3) Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 1994-1995, 1996-1997 և 1998-1999 թվականներին ծնված պատանիների և երիտասարդների բոնցքամարտի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը ՝ համաձայն N3 հավելվածի:
2. Կազմկոմիտեին /նախագահ Գ. Բադալյան/՝
   1) ապահովել մրցումների անցկացման մասսայականությունը.
   2) կազմակերպել մրցումների բացման և փակման հանդիսավոր արարողություն.
   3) մրցումների ավարտից հետո եռօրյա ժամկետում ներկայացնել գրավոր հաշվետվություն:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ